



«Այբ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2021թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ԳՃԱԿՈՂ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Տասներեքերորդ դարում օրըստօրե փթթող Անի **քաղաքում** հարուստ ու ինքնագոհ մի իշխան էր ապրում: Նա ուներ մի անսման դուստր՝ դեղձան ծամերով, ծավի աչքերով: Չնաշխարհիկ աղջիկը, հագին լաջվարդ շրջագգեստ, հաճախ ճեմում էր **հոր** ապարանքի քարե պատշգամբում: Իր **անբասիր** վարքով, դժխոյական հպարտ **կեցվածքով** նա հմայում էր անցորդներին:

Սակայն փառասեր հայրը անհագուրդ մղումով փափագում էր, որ իր դեռափթիթ դուստրը գեղեցկության մրցակից չունենա ողջ հողագնդի վրա: Այդ նպատակով աշխարհի բոլոր ծայրերից բերել էր տալիս պերճանքի երփնազան առարկաներ, կերպասյա հագուստներ, ակնառու զարդեր:

Բայց իշխանը գոհ չէր: Մի **օր** կանչում է նա Տրդատ ճարտարապետին՝ այն բազմափորձ ու քաջահմուտ **մարդուն**, որ կառուցել էր Անիի գեղեցիկ տաճարներն ու ապարանքները, այն մեծ արվեստագետին, որի համբավը թնդում էր Բյուզանդիայում:

-Ճարտարապետ եղբայր, մանրագլխին դիտե՛ք իմ չքնաղ աղջկան, նրա գուգները, տարաշխարհիկ հագուստները և և ինձ ընդ__ամենը մի խորհո՛ւրդ տվե՛ք՝ ինչպես հագցնեմ իմ դստերը, որ դառնա ամենահմայիչը աշխարհում:

Ապա հրամայում է հերթով հագցնել բոլոր հագուստները, զուգել անսման զարդերով: Ամեն հանդերձից ու զարդից հետո փորձառու Տրդատն օրորում է ալեհեր գլուխը.

-Ո՛չ, իշխա՛ն, հանեցե՛ք վերցրե՛ք...

Եվ երբ վերցնում են բոլոր զարդերը, **պճնամուրության** առարկաները, ու իշխանադուստրը մնում է միայն պարզ հագուստով, որի տակից երևում են նրա սլացիկ մարմնի համաչափ գծերը, **նրբագեղությունն** ու ներդաշնակությունը, Տրդատն ասում է.

—Այսպես, միայն այսպես... Գեղեցիկը, իշխա՛ն, կարիք չունի զարդի:

5 միավոր

2. Տեքստից դ՛րս գրիր հետևյալ բառերի հոմանիշները, գրի՛ր ևս մեկ հոմանիշ.

օրավուր	օրըստօրե, օրեցօր
հռչակ	համբավ, անուն
գույնզգույն	երփնագան, գունագարդ
հանգամանալից	մանրագնին, մանրամասն

2 միավոր

3. Տեքստից դ՛րս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

նախածանց+արմատ	աննման, անբասիր
արմատ+արմատ+վերջածանց	ակնառու, տասներեքերորդ
արմատ+հոդակապ+արմատ	ինքնագոհ, դեռափթիթ, փառասեր, մրցակից
արմատ+վերջածանց	պերճանք, կերպասյա, հագուստ, խորհուրդ
նախածանց+արմատ+վերջածանց	անհագուրդ, տարաշխարհիկ

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր այնպիսի բարդ բառ, որի արմատը լինի դերանուն խոսքի մաս: Դ՛րս գրիր այդ բառը և արմատը ընդգծի՛ր:

ինքնագոհ

0,5 միավոր

5. Տեքստից դ՛րս գրիր 1 պատճառական բայ և կազմի՛ր այդ բայի հարկադրական եղանակը, սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակաձևը (բայերը գործածի՛ր եզակի թվով, դրական և ժխտական խոնարհումով):

Պատճառական բայ	հագցնել
հարկադրական եղանակ	պետք է հագցնեմ, չպետք է հագցնեմ
վաղակատար ներկա	հագցրել եմ, չեմ հագցրել

1,5 միավոր

6. Դ՛րս գրիր տեքստում ընդգծված բառերը (6 բառ) և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

- քաղաքում - ի արտաքին հոլովում, ներգոյական հոլով, տեղի պարագա
- կեցվածքով - ի արտաքին հոլովում, գործիական հոլով, միջոցի անուղղակի խնդիր
- նրբագեղություն - ա ներքին հոլովում, ուղղական հոլով, ենթակա
- մարդուն - ու արտաքին հոլովում, հայցական հոլով, ուղիղ խնդիր
- օր - վա արտաքին հոլովում, հայցական հոլով, ժամանակի պարագա
- հոր – ո ներքին հոլովում, սեռական հոլով, հատկացուցիչ

2 միավոր

7. ա. Տեքստից դ՛րս գրիր պարզ համառոտ մեկ նախադասություն:

բ. Այդ նախադասությունը փոփոխելով՝ վերածի՛ր պարզ ընդարձակ նախադասության:

1,5 միավոր

8. Կետադրիչ տեքստը:

Չոհրապն զգաց այդ հոգեկան ապրումը ինչ -որ անբնական երանգ ուներ: Վաղուց էր մի տող չէր գրել: Նախավերջին Նորավեպը «Ժամուն բակը» գրել էր ութ տարի առաջ իսկ վերջինը «Անհավատարիմը» երեք: Նա գրասեղանի վրայից վերցրեց ձեռագիր Նորավեպի վերջին էջը և ընթերցումը չավարտած անփույթ տեղը դրեց: Չոհրապը որ կարող էր մինչև ուղևուծուծը հասկանալ ուրիշներին վերլուծել ու թղթին հանձնել Նրանց հոգեկան աշխարհը ինքն իրեն չէր հասկանում:

Չոհրապն զգաց՝ այդ հոգեկան ապրումը ինչ -որ անբնական երանգ ուներ: Վաղուց էր՝ մի տող չէր գրել: Նախավերջին Նորավեպը՝ «Ժամուն բակը», գրել էր ութ տարի առաջ, իսկ վերջինը՝ «Անհավատարիմը»՝ երեք: Նա գրասեղանի վրայից վերցրեց ձեռագիր Նորավեպի վերջին էջը և ընթերցումը չավարտած՝ անփույթ տեղը դրեց: Չոհրապը, որ կարող էր մինչև ուղևուծուծը հասկանալ ուրիշներին, վերլուծել ու թղթին հանձնել Նրանց հոգեկան աշխարհը, ինքն իրեն չէր հասկանում:

3 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, ինդրառության, համաձայնության):

- ա. Պետական բոլոր մուծումները կատարվել է ժամանակից շուտ:
- բ. Հյուսիս- հարավ մայրուղու կառուցումը Էապես խթանելու է երթևեկությանը:
- գ. Այս տարի լրանում է ԵՊՀ-ի հիմնադրման 98-ամյա տարելիցը:
- դ. Երիտասարդն ինձ մոտից հեռացավ տխուր ու ընկճված:

- ա. Պետական բոլոր մուծումները կատարվել են ժամանակից շուտ:
- բ. Հյուսիս- հարավ մայրուղու կառուցումը Էապես խթանելու է երթևեկությունը:
- գ. Այս տարի լրանում է ԵՊՀ-ի հիմնադրման 98-ամյա տարեդարձը:
- դ. Երիտասարդն իմ մոտից հեռացավ տխուր ու ընկճված:

2 միավոր

Լեզվամտածողություն

1. Ամբողջացրո՛ւ և ավարտի՛ր Տրդատ ճարտարապետի խոսքը 2 բարդ նախադասությամբ:

3 միավոր

2. Տեքստի հիմնական միտքն արտահայտի՛ր միայն միակազմ նախադասությունների միջոցով:
Գործածի՛ր առնվազն 4 միակազմ նախադասություն: Գործածի՛ր միակազմ նախադասությունների տարբեր տեսակներ:

2 միավոր

3. *Տեղի տալ* և *տեղիք տալ* բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:

2 միավոր

4. Տեքստից դժուար գրիչ հոմանիշների երկու եռյակ:

չնաշխարհիկ – չքնաղ - անսման

փորձառու – քաջահմուտ - բազմափորձ

2 միավոր

5. Գրիչ գունանուններով չորս դարձվածքի օրինակ և նրանցից 2-ով կազմիչ նախադասություններ:

3 միավոր

